

Luys Lnyu®



ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՀՈՒԼԻՍ ԱՄԻՍՆԵՐԻՆ




ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ.....	1
1.1. Արդյունաբերություն.....	2
1.2. Շինարարություն.....	4
1.3. Ծառայություններ.....	4
1.4. Առևտուր.....	6
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ.....	6
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ.....	7
4. ՓՈԽԱՐԺԵՔ.....	8
5. ՀԱՐԿԱՐՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ.....	9
5.1. Բյուջեի եկամուտներ.....	9
5.2. Բյուջեի ծախսեր.....	11
5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռ.....	12
5.4. Պետական պարտք.....	12
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ.....	13
6.1. Գնաճ.....	13
6.2. Ավանդներ և վարկեր.....	14
7. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.....	15
8. ԱՄՓՈՓՈՒՄ.....	17

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, %




Հուլիս ամսվա տնտեսական ակտիվության անկման տեմպն արագացել է նախորդ ամիսների դանդաղումից հետո: Չնայած տնտեսական ակտիվության վերականգնումն ազդարարող մի շարք հայտարարություններին, հուլիսին ՏԱՑ-ի անկումը խորացել է՝ կազմելով -10.2%: Համեմատության համար կարելի է նշել, որ ապրիլ ամսվա համապատասխան ցուցանիշը կազմել էր -16.4%, այն դեպքում, երբ այդ ամսվա ամբողջ ընթացքում գործում էին տնտեսական ամենախիստ սահմանափակումները (արգելված էին տնտեսական գործունեության գրեթե բոլոր տեսակները): Հետևաբար, հուլիս ամսին, երբ գործում էին բավական մեղմ տնտեսական սահմանափակումներ (ապրիլ-հունիս ամիսների համեմատ), այդքան ցածր տնտեսական ակտիվության ցուցանիշը պետք է մտահոգիչ լինի՝ առավել ևս, եթե հաշվի առնենք, որ ՏԱՑ-ի անկման խորացումը հիմնականում պայմանավորված է արդյունաբերության և ծառայությունների ոլորտների անկումների խորացմամբ:

Հուլիսին անկման խորացման արդյունքում, կուտակային ՏԱՑ-ի ցուցանիշի անկումը նույնպես խորացել է՝ հունվար-հունիսի -4.8%-ից հունվար-հուլիսին հասնելով -5.7%-ի:

Նախորդ ամիսների տնտեսական ակտիվության ցուցանիշները վերանայվել են, ինչի արդյունքում հունվար-փետրվար ամիսների ՏԱՑ-ը նվազել է 0.1 տոկոսային կետով, հունվար-ապրիլից մինչև հունվար-հունիս ամիսների ցուցանիշները բարելավվել են 0.1 տոկոսային կետով: Վերանայումները հիմնականում վերաբերում են ծառայությունների աճերին:


Տնտեսական ակտիվության ցուցանիշի անկմանը հիմնականում նպաստել են առևտրի, ծառայությունների և շինարարության ոլորտները՝ համապատասխանաբար -4.1, -2.2 և -1.1 տոկոսային կետերով: Արդյունաբերությունն ունեցել է դրական նպաստում՝ 0.3 տոկոսային կետի չափով՝ առավելապես հանքարդյունաբերության աճի շնորհիվ:

Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները, 2020թ., տոկոսային կետ



1.1. Արդյունաբերություն

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, %



Արդյունաբերության աճի տեմպը նվազել է, թեև այն դեռևս մնում է դրական մակարդակում: Արդյունաբերության ոլորտում հունվար-հուլիս ամիսների

տնտեսական ակտիվության ցուցանիշը նվազել է 0.6 տոկոսային կետով՝ կազմելով 1.3%, ինչը պայմանավորված է հուլիս ամսվա անկման խորացմամբ: Հատկանշական է, որ տնտեսական ակտիվության սահմանափակումները հուլիսին եղել են ավելի մեղմ, քան հունիսին, հետևաբար ավելի մեծ անկումը մտահոգիչ երևույթ է և կարող է հետևանք լինել ցածր ներդրումային ակտիվության:

Արդյունաբերության ոլորտում դրական զարգացումները ապահովվում է հիմնականում հանքարդյունաբերության ճյուղի շնորհիվ: Այսպես, հունվար-հունիս¹ ամիսներին այս ճյուղի աճը կազմել է 24.3% և ընդհանուր արդյունաբերության աճին նպաստել է 4.3 տոկոսային կետով: Մշակող արդյունաբերության ճյուղում նույն ժամանակահատվածում անկումը խորացել է 0.2 տոկոսային կետով՝ կազմելով 3.6%, իսկ նպաստումն ընդհանուր արդյունաբերության աճին կազմել է -2.4 տոկոսային կետ:


«Էլեկտրաէներգիա, գազի և գոլորշու մատակարարում» ենթաճյուղը նույնպես անկում է գրանցել 0.5%-ով՝ ընդհանուր արդյունաբերության աճին ունենալով -0.1 տոկոսային կետ նպաստում, իսկ «ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» ենթաճյուղը նվազել է 20.9 տոկոսով՝ ունենալով 0.3 տոկոսային կետ բացասական նպաստում:

Նշենք, որ արդյունաբերության ապրիլից հունիս ամիսների 12-ամսյա աճի ցուցանիշները նույնպես վերանայվել են, ինչի արդյունքում հունվար-մայիս ամիսների աճը 2.4%-ից դարձել է 2.7%, իսկ հունվար-հունիս ամիսների աճը՝ 1.5%-ից դարձել է 1.9%:

¹ Հունվար-հուլիս ամիսների ցուցանիշները դեռևս չեն հրապարակվել:

1.2. Շինարարություն


Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %



Շինարարության ոլորտում տնտեսական ակտիվությունը շարունակում է անկում ապրել բարձր տեմպերով: Ընթացիկ տարվա հուլիսին շինարարության ծավալը նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ նվազել է 19.5%-ով, ինչի արդյունքում, շինարարության անկումը հունվար-հուլիսին կազմել է մոտ -22.6%: Շինարարության անկումը մասամբ պայմանավորված է նաև պետական բյուջեի հաշվին կատարվող շինարարության անկմամբ՝ բյուջեի կապիտալ ծախսերի թերակատարման հետևանքով:

1.3. Ծառայություններ

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %



Ծառայությունների ոլորտում անկման տեմպը խորացել է՝ գերազանցելով նույնիսկ ապրիլի անկման ցուցանիշը: Համավարակի հետևանքով զգալիորեն տուժել են ծառայությունների ոլորտում գործող տնտեսավարող սուբյեկտները, սակայն սպասվում էր, որ ապրիլի անկումը պետք է լիներ ամենամեծը: Հուլիսին, այնուամենայնիվ, գրանցվել է ծառայությունների 21.6% անկում, որն ապրիլի անկման նկատմամբ 4.8 տոկոսային կետով ավելի մեծ է: Ստացվում է, որ ներգնա տուրիզմի աշխուժացումը չի կարողացել մեղմել ծառայությունների անկումը:

Հունվար-հուլիս ամիսներին ծառայությունների անկումը կազմել է 9.3%՝ նախորդ ամսվա համապատասխան ցուցանիշի նկատմամբ վատթարանալով 2.4 տոկոսային կետով:


Հունվար-հունիս ամիսների տվյալներով², ծառայությունների անկումը հիմնականում պայմանավորված է եղել «կացության և հանրային սննդի կազմակերպում», «տրանսպորտ» և «վարչարարական և օժանդակ գործունեություն» ենթաճյուղերի անկմամբ, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 3.4, 2.9 և 1.5 տոկոսային կետ: Ծառայությունների ճյուղում դրական դինամիկա է դրսևորել «ֆինանսական և ապահովագրական գործունեություն», ենթաճյուղը, որին դասվող ծառայությունների ծավալն աճել է 11.7%-ով՝ ընդհանուր ոլորտի աճին նպաստելով 2.5 տոկոսային կետով:

Նշենք, որ նախորդ ամիսների ծառայությունների աճի ցուցանիշները զգալիորեն վերանայվել են, ինչի արդյունքում հունվար-մարտ ամիսների աճը նվազել է 0.4 տոկոսային կետով, հունվար-ապրիլի և հունվար-մայիսի աճերը՝ յուրաքանչյուրը 0.6 տոկոսային կետով, իսկ հունվար-հունիս ամիսների աճը նվազել է 0.5 տոկոսային կետով:

² Հունվար-հուլիս ամիսների ցուցանիշները դեռևս չեն հրապարակվել:

1.4. Առևտուր


Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %



Առևտրի ծավալները հուլիսին նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ նվազել են 10.4%-ով: Առևտրի ծավալների 12-ամսյա անկումը փոքր-ինչ մեղմվել է, սակայն այն դեռևս մնում է զգալի մեծ՝ ընդհանուր տնտեսական ակտիվությանն ունենալով ամենամեծ բացասական նպաստումը: Կուտակային անկման տեմպը նույնպես մեղմվել է, սակայն ավելի փոքր չափով՝ ընդամենը 0.1 տոկոսային կետով, և կազմել է 11.0%:

2. ԱՐՏԱԲԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճ, %




Արտահանման 12-ամսյա անկումը զգալիորեն խորացել է: Ինչպես ընդհանուր տնտեսական ակտիվությունը, արտահանման ցուցանիշը նույնպես վատթարացել է հուլիս ամսին: Այսպես, հուլիս ամսվա արտահանման ծավալները նախորդ տարվա հուլիսի նկատմամբ նվազել են 5.9%-ով, ինչը նախորդ ամսվա

0.4-ի համեմատ զգալի վատթարացում է: Հունվար-հուլիս ամիսների արտահանման կուտակային նվազումը կազմել է 6.4%՝ նախորդ ամսվա համապատասխան ցուցանիշի նկատմամբ բարելավվելով 0.1 տոկոսային կետով:

Հարկ է նշել, որ արտահանման ցուցանիշները կրկին ենթարկվել են վերանայումների, ինչի արդյունքում հունվար-մայիս ամիսների աճի անկումը մեղմվել է 0.1 տոկոսային կետով՝ կազմելով 7.9%:

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճ, %



Ներմուծման ծավալը շարունակում է խոշոր տեմպով անկում գրանցել: Հուլիս ամսվա ներմուծման ծավալները նախորդ տարվա հուլիսի նկատմամբ նվազել են 18.6%-ով, իսկ կուտակային՝ հունվար-հուլիս ամիսների անկումը կազմել է 13.7%՝ նախորդ ամսվա նկատմամբ վատթարանալով 0.9 տոկոսային կետով:

Ներմուծման ցուցանիշները նույնպես վերանայվել են: Այսպես, հունվար-մարտ ամիսների ներմուծման անկումը 4.2%-ից դարձել է 4.1%, հունվար-մայիս ամիսներինը՝ 12.3%-ից դարձել է 12.4%, իսկ հունվար-հունիս ամիսներինը՝ 12.9%-ից դարձել է 12.8%:

3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ


Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների՝ 2020թ. հունվար-հուլիս ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 5.0 տոկոսով: Ընդ որում՝ պետական հատվածում աշխատավարձն աճել է 7.7 տոկոսով, իսկ մասնավոր հատվածում՝ 3.5 տոկոսով: Միջին ամսական անվանական աշխատավարձի ցուցանիշի հաշվարկում (ապրիլից սկսած) ներառվել են նաև այն կազմակերպությունների տվյալները, որոնք COVID-19-ի հետևանքով աշխատողների մի մասին կամ ամբողջությամբ ուղարկել են չվճարվող հարկադիր

պարապուրդի: Վերջիններիս աշխատանքային գործունեությունը չի դադարեցվել, սակայն չեն վարձատրվել:

Հունվար-հուլիս ամիսներին միջին ամսական անվանական աշխատավարձը կազմել է 187,224.0 դրամ, ընդ որում՝ պետական հատվածում՝ 165,813.0 դրամ, իսկ մասնավոր հատվածում՝ 197,603.0 դրամ:


Հատկանշական է, որ ճգնաժամային իրավիճակում պետական հատվածի աշխատավարձերի աճի տեմպը 2020թ. նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արագանում է, ինչը կարող է լինել ինչպես օրենսդրորեն որոշ պետական աշխատողների (ուսուցիչներ, զինվորականներ և այլն) աշխատավարձերի բարձրացման, այնպես էլ խոշոր պարգևավճարների ստացման արդյունքում: Սակայն, տվյալների բացակայության պատճառով, վերջիններիս նպաստման չափը հնարավոր չէ գնահատել:



Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը, 2020թ., հունվար-հուլիս, %



4. ՓՈԽԱՐԺԵՔ

Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները, կուտակային աճը, % (աճը նշանակում է << դրամի արժևորում)





2020 թվականի հունվար-հուլիսին ՀՀ դրամի միջին փոխարժեքի արժևորման տեմպը ԱՄՆ դոլարի նկատմամբ վերածվել է արժեզրկման: Նախորդ տարվա նույն ամիսների համեմատությամբ հունվար-հուլիսին ՀՀ դրամի արժեզրկումն ԱՄՆ դոլարի նկատմամբ կազմել է 0.1%: Սակայն, եվրոյի նկատմամբ ՀՀ դրամը մնում է արժևորված՝ 1.8%-ով: Նույն ժամանակահատվածում ՌԴ ռուբլու նկատմամբ նկատվում է ՀՀ դրամի արժևորման տեմպի արագացում, որը կազմել է 7.0%:


5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ

5.1. Բյուջեի եկամուտներ

Պետական բյուջեի եկամուտների նվազումը նույնպես խորացել է: Հունվար-հուլիս ամիսներին պետական բյուջեի ընդհանուր եկամուտները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել են 5.8%-ով՝ նախորդ ամսվա 5.5%-ի փոխարեն: Հարկային եկամուտները և պետական տուրքերը նվազել են մոտ 5.1%-ով՝ 0.5 տոկոսային կետով վատթարանալով հունվար-հունիս ամիսների անկման համեմատ: Նույն ժամանակահատվածում պետական բյուջեի պաշտոնական դրամաշնորհները նվազել են 50.3%-ով, իսկ այլ եկամուտները՝ 11.8%-ով:

Հարկային եկամուտները հուլիս ամսին նախորդ տարվա հուլիսի նկատմամբ նվազել են 7.7%-ով, ինչը զգալիորեն ավելի փոքր է, քան նախորդ ամսվա 32.1% անկումը: Վերջինս, սակայն, պայմանավորված էր նաև շահութահարկի օրենսդրական փոփոխություններով, ըստ որոնց՝ հարկատուներին հնարավորություն էր տրվել 2020թ. երկրորդ եռամսյակում շահութահարկի կանխավճարներ չիրականացնել:

Գծապատկեր 11. Հարկային եկամուտների աճը 2020 թվականին, %



Հարկային եկամուտների նվազմանն ամենամեծ նպաստումն են ունեցել շահութահարկի և ԱԱՀ-ի համապատասխանաբար 15.4 և 6.6 տոկոս անկումները, որոնցից յուրաքանչյուրի նպաստումը ընդհանուր հարկերի նվազմանը կազմել է 2.2 տոկոսային կետ: Հարկերի անկմանը նպաստել է նաև մաքսատուրքերի 28.3% նվազումը, որի նպաստումը կազմել է -1.7 տոկոսային կետ:


Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների, 2020թ.

	Հունվար-հունիս		Հունվար-հուլիս	
	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ
Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք	-4.6	-4.6	-5.1	-5.1
ԱԱՀ	-7.3	-2.4	-6.6	-2.2
Շահութահարկ	-14.3	-2.3	-15.4	-2.2
Եկամտային հարկ	2.2	0.6	2.7	0.8
Ակցիզային հարկ	5.5	0.4	1.2	0.1

Շրջանառության հարկ	10.7	0.2	-3.5	-0.1
Արտոնագրային հարկ	-98.7	-0.3	-98.6	-0.3
Բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար	18.3	0.6	11.3	0.4
Մաքսատուրք	-26.8	-1.5	-28.3	-1.7
Սոցիալական վճար	15.3	0.2	15.0	0.2
Այլ հարկային եկամուտներ	5.9	0.1	20.2	0.3
Պետական տուրք	-12.8	-0.3	-15.9	-0.4

5.2. Բյուջեի ծախսեր

Գծապատկեր 12. Պետական բյուջեի ծախսերը և դրա բաղադրիչները, մլրդ դրամ




Եկամուտների նվազման պայմաններում պետական բյուջեի ծախսերի աճը շարունակում է արագանալ: Այսպես, հունվար-հուլիսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ ընդհանուր պետական ծախսերն աճել են 20.7 տոկոսով՝ կազմելով 938.2 մլրդ դրամ՝ նախորդ ամսվա 20.3% աճի փոխարեն: Ընդ որում, աճում է ընթացիկ ծախսերի տեմպը, մինչդեռ կապիտալ ծախսերը մնում են թերակատարված: Այսպես, ընթացիկ ծախսերն աճել են 18.6 տոկոսով՝ նախորդ ամսվա 17.4%-ի փոխարեն, իսկ կապիտալ ծախսերը (ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները) աճել են մոտ 60.6%՝ նախորդ ամսվա 94.5%-ի փոխարեն:

Ինչպես նախորդ երկու տարիներին, այս տարի նույնպես պետական բյուջեի թերակատարումները շարունակվում են: Այսպես, 2020թ. առաջին կիսամյակի ճշտված պլանի նկատմամբ ընդհանուր ծախսերի կատարողականը կազմել է

82.6%, ընթացիկ ծախսերինը՝ 89.0%, իսկ կապիտալ ծախսերինը՝ 38.7%: Այսինքն՝ կապիտալ ծախսերի համար նախատեսված 118.2 մլրդ դրամից իրականացվել է ընդամենը 45.8 մլրդ դրամը՝ թերակատարվելով 61.3%-ով:

5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը

Գծապատկեր 13. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը (-), ժամանակահատվածի վերջի դրությամբ, մլրդ դրամ



2020թ. հունվար-հուլիս ամիսներին պետական բյուջեի պակասուրդը մեծացել է: Պետական բյուջեի ծախսերի առաջանցիկ աճի հետևանքով ձևավորվել է 104.9 մլրդ դրամ պակասուրդ: Նախորդ ամսվա համեմատ, պակասուրդն աճել է մոտ 56 մլրդ դրամով, ինչը զգալի ազդակ պետք է հանդիսանար տնտեսության համար՝ խթանելով տնտեսական ակտիվությունը: Սակայն, տնտեսական ակտիվության ցուցանիշի անկումը խորացել է:

5.4. Պետական պարտք


2020թ. հուլիսի վերջի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 7,939.5 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա հուլիսի նկատմամբ աճելով 13.8%-ով: Ընդ որում, ՀՀ կառավարության պարտքը հուլիսի վերջի դրությամբ կազմել է 7,460.9 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճելով 15.5%-ով: Աճը տեղի է ունեցել ինչպես արտաքին, այնպես էլ ներքին պարտքի հաշվին, որոնք աճել են համապատասխանաբար 13.5% և 21.8%:

Նախորդ ամսվա նկատմամբ կառավարության պարտքն աճել է 217.1 մլն ԱՄՆ դոլարով (70.0 մլն դոլարով՝ արտաքին և 147.1 մլն դոլարով՝ ներքին պարտքի աճի հաշվին) կամ 3.0%-ով:

Պարտքի աճի արագացումը պայմանավորված է ինչպես հարկային եկամուտների նվազմամբ, այնպես էլ պետական բյուջեի ծախսերի աճի

արագացմամբ: Սակայն դրա աճի տեմպը զգալիորեն արագացել է, ինչն առաջացնում է ռեսուրսների ծախսման արդյունավետության բարձրացման անհրաժեշտություն՝ հետագա մակրոտնտեսական անկայունությունից խուսափելու համար:


Գծապատկեր 14. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %



6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

6.1. Գնաճ

Գծապատկեր 15. 12-ամսյա գնաճ, %




Գնաճային միջավայրը մնում է բավական ցածր: Սկսած ապրիլից, գնաճը դրսևորել է արագացման միտում, սակայն հուլիսին այդ միտումը չի պահպանվել: 12-ամսյա գնաճը կազմել է 1.5%՝ հունիսի նկատմամբ դանդաղելով 0.2 տոկոսային կետով: Ընթացիկ տարվա ընթացքում ԿԲ-ն նվազեցրել է վերաֆինանսավորման

տոկոսադրույքը՝ ընդհանուր առմամբ 1.0 տոկոսային կետով, սակայն գնաճը դեռևս չի մոտեցել ԿԲ թիրախի ստորին շեմին:


6.2. Ավանդներ և վարկեր

Գծապատկեր 16. Ավանդների 12-ամսյա աճը, %



2020թ. հունվար-հուլիս ամիսներին առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների ծավալների աճը կայունացել է 11.8 տոկոսի շուրջ:


Գծապատկեր 17. Տնտեսության հատվածների նպաստումները ավանդների 12-ամսյա աճին, 2020թ., տոկոսային կետ



Ավանդների աճը հիմնականում պայմանավորված է տնային տնտեսություններից և ոչ ռեզիդենտներից ներգրավվող ավանդների աճով, որոնց նպաստումները ընդհանուր ավանդների աճին կազմել են համապատասխանաբար 5.5 և 2.1 տոկոսային կետ:

Վարկերի աճի տեմպը ունի արագացման միտում: ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերը (արտարժույթով և ՀՀ դրամով) 2020թ. հունվար-հուլիսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 20.6 տոկոսով՝ նախորդ ամսվա համապատասխան ցուցանիշի համեմատ աճելով 2.4 տոկոսային կետով: Վարկերի աճի արագացումը պայմանավորված է հիմնականում կառավարության տնտեսական օժանդակության ծրագրերի իրականացմամբ: Քանի որ վերջիններիս վերաբերյալ փաստացի տեղեկատվությունը չի հրապարակվում, հնարավոր չէ գնահատել դրանց ազդեցության չափը:

Գծապատկեր 18. Տնտեսության ճյուղերի նպաստումները վարկերի 12-ամսյա աճին, 2020թ., տոկոսային կետ



Վարկերի աճին հիմնականում նպաստել են սպառողական, հիպոթեքային և ծառայությունների ոլորտին տրամադրվող վարկերը՝ համապատասխանաբար 4.6, 3.6 և 3.8 տոկոսային կետերով: Կարելի է նկատել, որ վարկերի աճի կառուցվածքում վերջին ամիսներին նվազել է սպառողական վարկերի նպաստման չափը, և փոխարենը աճել է ծառայությունների և արդյունաբերության ոլորտին տրամադրվող վարկերի նպաստումը: Սա հիմնականում պայմանավորված է կառավարության հակաճգնաժամային ծրագրերի իրականացմամբ, որոնք ուղղված են հենց այդ ոլորտներում վարկավորման խթանմանը:

7. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ


Կորոնավիրուսի տարածման սկզբնական շրջանում, միջազգային տնտեսագետները շրջանառում էին այն դրույթը, որ կառավարությունները պետք է ընտրեն, թե որ կորն են հարթեցնելու՝ առողջապահական, թե՛ տնտեսական:

Այսինքն, եթե առողջապահական ճգնաժամը արագ հաղթահարելու համար պետք էր գնալ տնտեսական սահմանափակումների՝ հարթեցնելով առողջապահական և խորացնելով տնտեսական անկման կորը, ապա տնտեսական կորուստները չեզոքացնելու համար անխուսափելի կլինեին առողջապահական կորի խորացումը:

ՀՀ կառավարության գործողությունների արդյունքում խորացել են միաժամանակ և՛ տնտեսական, և՛ առողջապահական կորերը: Սույն տեղեկանքում նկարագրված տնտեսական բացասական զարգացումները կարելի էր արդարացված համարել, եթե նվազած լինեին հիվանդների թիվը և բարելավված լինեին առողջապահական իրավիճակը:

Սակայն, կորոնավիրուսի վերաբերյալ վիճակագրությունն այլ բան է ցույց տալիս: Օգոստոսի 24-ի դրությամբ ՀՀ-ում հաստատված դեպքերը կազմել են 42825, իսկ մահվան դեպքերը՝ 854:

Գծապատկեր 19. Կորոնավիրուսի վարակման և մահացության դեպքերը



1 մլն բնակչի հաշվով դեպքերի թվով Հայաստանը գտնվում է աշխարհում 14-րդ տեղում, ինչը բնականաբար ավելի լավ է, քան նախորդ ամսվա 11-րդ հորիզոնականը: Սակայն, հարկ է նշել, որ 1 մլն բնակչի հաշվով կատարված թեստերի քանակով ՀՀ-ն զբաղեցնում է աշխարհում 75-րդ հորիզոնականը: Գծապատկեր 19-ից կարելի է նկատել, որ նոր գրանցվող դեպքերի օրական թիվը աստիճանաբար նվազել է, սակայն վերջինս հիմնականում պայմանավորված է թեստերի իրականացման քանակի նվազմամբ:

Առողջապահական խնդիրների լուծման ուղղությամբ կառավարության կողմից հստակ քայլերի բացակայությունը մեծացնում է տնտեսությունում տիրող

անորոշությունները՝ բացասաբար ազդելով տնտեսական ակտիվության և ներդրումների վրա, նվազեցնելով տնտեսության վերականգնման տեմպը:

8. ԱՄՓՈՓՈՒՄ

1. **Հուլիս ամսին տնտեսական ակտիվության անկումը ավելի է խորացել՝ հասնելով 10.2%-ի, ինչը բավական մտահոգիչ է, հաշվի առնելով, որ ապրիլին՝ ամենախիստ սահմանափակումների պայմաններում, անկումը կազմել էր դրան մոտ՝ 16.4%:** ՏԱՑ-ի անկման խորացումը հիմնականում պայմանավորված է արդյունաբերության և ծառայությունների ոլորտներում գրանցվող անկումների խորացմամբ: Ընդ որում, արդյունաբերության ոլորտի անկման խորացումը պայմանավորված է մշակող արդյունաբերության անկմամբ, մինչդեռ հանքարդյունաբերությունը պահպանում է բարձր աճի կայուն տեմպերը:

2. **Կառավարության պարտքի աճի տեմպն արագանում է՝ ռիսկեր առաջացնելով հետագա մակրոտնտեսական կայունության ապահովման տեսանկյունից:** Հուլիսին պարտքի աճը նախորդ տարվա հուլիսի նկատմամբ հասել է արդեն 15.5%-ի՝ զգալիորեն արագանալով նախորդ ամիսների համեմատությամբ: Ճգնաժամային իրավիճակում արդարացված է պարտքի աճը, քանի որ դրա միջոցով հնարավոր է խթանել տնտեսական ակտիվությունը և խուսափել խոր անկումներից: Սակայն, այստեղ բավական կարևոր են պարտքի օգտագործման ուղղությունները: Եթե ներգրավվող միջոցներն օգտագործվեն ընթացիկ՝ տնտեսական աճ չգեներացնող ծախսերի ֆինանսավորման համար, ապա երկարաժամկետում պետական պարտքի աճը կհանգեցնի մակրոտնտեսական անկայունության: Հետևաբար, կառավարությունը պետք է հնարավորինս զգուշություն դրսևորի այս հարցում, հետագա տարիների տնտեսական աճը չվտանգելու համար:

3. **Համաճարակային իրավիճակը ՀՀ-ում բարելավման միտումներ չի ցուցաբերում, ինչի արդյունքում տնտեսությունում անորոշությունները պահպանվում են՝ հիմքեր ստեղծելով տնտեսական անկման խորացման համար:** Կորոնավիրուսով վարակման նոր դեպքերը, թեև ունեն նվազման միտում, սակայն շարունակում են բավական մեծաթիվ մնալ, ինչի արդյունքում կորոնավիրուսով վարակման հաստատված դեպքերի քանակը բավական բարձր է այլ երկրների համեմատությամբ: Օրական դեպքերի անկումը հիմնականում պայմանավորված է նախորդ ամիսների համեմատությամբ թեստերի իրականացման քանակի կիճատմամբ: 1 մլն բնակչի հաշվով գրանցված դեպքերի թվով ՀՀ-ն զբաղեցնում է աշխարհում 14-րդ տեղը, իսկ իրականացված թեստերի թվով՝ 75-րդ տեղը: Կառավարության կողմից, այս պայմաններում, սահմանափակումների ավելի թուլացման մասին հայտարարությունները՝ առանց համաճարակային խնդրի լուծման ուղիների առկայության, ոչ միայն չեն նվազեցնում անորոշությունները, այլև տնտեսավարողների շրջանում հաստատում

են բացասական սպասումները՝ հիմքեր ստեղծելով տնտեսական անկման խորացման համար:

4. **Կապիտալ ծախսերի թերակատարման խնդիրը շարունակում է մնալ չլուծված:** Հատկանշական է, որ կառավարության կողմից անընդհատ նշվում է կապիտալ ծախսերի կարևորության մասին՝ վկայակոչելով 2020թ. ընթացքում դրանց աննախադեպ մակարդակը: Սակայն, փաստացի վիճակագրությունը փաստում է, որ կապիտալ ծախսերի ծավալները դեռևս հեռու են նախատեսված մակարդակից: Փաստացի կիսամյակային կատարողականը կազմել է ընդամենը 38.7%, ինչը հատկապես տնտեսական անկման պայմաններում զգալի բացասական հետևանքներ կունենա ինչպես ընթացիկ տնտեսական ակտիվության, այնպես էլ տնտեսության ներուժի վրա:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: